# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ 2019 թվականի __________ N__ ___-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ԹԻՎ 105-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2019 թվականի __________ N__ ___-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ԹԻՎ 105-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

----------------------------------------------------------------------------------------------------------------

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի թիվ 867 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 105-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
2. Որոշման 2-րդ կետում «օգոստոսի 1-ից» բառերը փոխարինել «հոկտեմբերի 1-ից» բառերով:
3. Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Սահմանել, որ՝

ա. լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը կարող են լիցենզավորող մարմին հանձնվել առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային համակարգի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով: Առձեռն փաստաթղթեր ներկայացնելիս պետք է ներկայացվեն դրանց բնօրինակները, իսկ պատճենահանումն անվճար իրականացնում է լիազոր մարմինը,

բ. դեղատնային գործունեության իրականացման լիցենզիա ունեցող և

միաժամանակ դեղերի մեծածախ իրացում իրականացնող անձը «Դեղերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 16-րդ մասին համապատասխան սույն թվականի հոկտեմբերի 1-ից մեծածախ իրացման գործունեության իրականացնելու դեպքում դեղատնային գործունեություն իրականացնելու համար առանձին իրավաբանական անձ ստեղծելու դեպքում դեղատնային գործունեության լիցենզավորման համար ներկայացնում է դեղատնային գործունեության իրականացման լիցենզավորման հայտ, հայտում նշված տարածքում իրականացվող (գործող) լիցենզավորված գործունեության լիցենզիայի պատճենը, իսկ հայտին կից ներկայացվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են լիցենզավորվելուց հետո երկամսյա ժամկետում:

Սույն պարբերությամբ նախատեսված դեպքում լիցենզավորման համար ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ստուգաճշտումը լիազոր մարմնի կողմից իրականացվում է հայտատուի կողմից լիցենզավորման հայտի և դրան կից ներկայացվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո երկամսյա ժամկետում:

Սույն պարբերությամբ նախատեսված դեպքում դեղատնային գործունեության իրականացման լիցենզավորման հայտի և դրան կից փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվում 2019 թվականի սեպտեմբերի 2-ը:

Դեղատնային գործունեության իրականացման լիցենզավորման համար սույն ենթակետով նախատեսված կարգավորումները գործում են մինչև 2019 թվականի սեպտեմբերի 2-ը ներկայացված լիցենզավորման հայտերի համար:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: